# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՔԱՋԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ

18.08.2024



**Սիրելի՛ քաջարանցիներ**

Շնորհավորում եմ Քաջարանի 66-րդ տարեդարձի կապակցությամբ:
Քաղաքի օրվա առիթով բոլորիդ քաջառողջություն, բարեկեցություն, նորանոր ձեռքբերումներ, երջանկություն եմ մաղթում, իսկ մեր երկրի արդյունաբերական կարևորագույն կենտրոններից ու Սյունիքի գեղեցիկ քաղաքներից մեկին՝ Քաջարանին, բարգավաճում, մշտական առաջընթաց ու խաղաղություն եմ մաղթում:
Անգնահատելի է այս քաղաքի ու քաջարանցիների դերը Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա զարգացման, մեր երկրի առջև ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծման, պետական բյուջեի գոյացման մեջ: Տարիներ առաջ այն հիմնադրվել ու հետագայում կառուցվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի շուրջ ու նրա շնորհիվ և բնական է, որ ընկալվում է որպես «քաղաք-կոմբինատ»: Շնորհավորանքս՝ նաև հանքարդյունաբերական հսկայի ողջ ղեկավար կազմին ու կոլեկտիվին:
Բայց Քաջարանն այսօր արդեն զուտ հանքարդյունաբերության կենտրոն չի դիտվում. այստեղ տեսնում ենք օր-օրի զարգացող քաղաքային միջավայր, մարզական ու կրթական ակտիվ կյանք, մշակույթ ու ավանդույթներ՝ ստեղծագործ և ինքնաբավ մարդկանցով: Քաջարանը, իիրավի, այն վայրն է, որտեղ յուրաքանչյուր ոք, ով ունի ցանկություն և տաղանդ, կարող է իրացնել իր ներուժը: Պատահական չէ, որ այն դեպի իրեն է ձգում քաղաքացիների ՀՀ մյուս համայնքներից: Իսկ աշխատասեր ու իրենց ծննդավայրի հողին ամուր կանգնած քաջարանցիները ստեղծում ու բազմապատկում են այն հաջողությունները, որ ժառանգել են նախորդ սերունդներից:
Այստեղ կա հույս և լավատեսություն վաղվա օրվա հանդեպ, անընդհատ ծրագրվող ու անպայման կյանքի կոչվող նախաձեռնություններ, որի հիմքն, իհարկե, յուրաքանչյուրիդ աշխատանքն է:
**Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ Քաջարան:**